# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ԳՄ ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստի

գ. Ծովինար <<17>> հունիսի 2020թ.
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ս. Բալոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մանուկյան, Հ. Գալստյան
Հանձնաժողովիքարտուղար՝ Ժ. Խաչատրյան

1. Հայտերը բացվել են 2020թ. Հունիսի 12-ին՝ ժամը 12:00-ին:
2. Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը:

| h/h | Մասնակցի անվանումը | Մասնակցի հասցեն |
|---|---|---|
| 1 | «Նաիրի Շին» ՍՊԸ | Ք. Մարտունի, Մյասնիկյան փողոց, տուն 115 |

3. Տվյալներ մասնակիցների հայտերի հրավերով պահանջվող փաստաթղթերը առկայության վերաբերյալ:

Գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը մասնակցի հայտում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունը, այն է՝ մասնակցի հայտի մեջ բացակայում էր հայտի ապահովումը, որը պետք է ներկայացված լիներ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի դրույթներով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել հանձնաժողովի նիստը.

- անձնաժողովի քարտուղարին հանձնարարեց էլեկտրոնային եղանակով ծանուցում մասնակցին հայտնաբերված անհամապատասխանությունների շտկելու վերաբերյալ՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:
- Գնահատող հանձնաժողովի կասեցված նիստ վերսկսել 17.06.2020թ.-ին ժամը 12-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Քանի որ սահմանված ժամկետում «Նաիրի Շին» ՍՊԸ-ն շտկեց հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը՝ ներկայացնելով հայտի ապահովումը բանկային երաշխիքի ձևով, ուստի ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 42-րդ կետի դրույթներով՝ «Նաիրի Շին» ՍՊԸ-ն հայտը գնահատվեց բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված հայտի հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

| h/h | Մասնակցի անվանումը | Հրավերի պահանջներին համապատասխանությունը |
|---|---|---|
| 4 | «Նաիրի Շին» ՍՊԸ | բավարար |

5. Բավարար գնահատված հայտերի գնային առաջարկները՝ ՀՀ դրամով

**Գեղարքունիքի մարզի Ծովինար համայնքի մշակույթի կենտրոնի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ:**

| h/h | Մասնակցի անվանումը | Աշխատանքի նախահաշվային գինը | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ-ն | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | «Նաիրի Շին» ՍՊԸ | 11707550 | 10537145 | 1159085 | - | 11696230 |

6. ՀՀ ԳՄ ԾՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 ծածկագրով գնանշման հարցման բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկի հիման վրա:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- «Նաիրի Շին» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ չսահմանելով:

Ընտրված մասնակցի հետ սկսել պայմանագիր կնքվելու գործընթաց՝ սույն հայտարարությունը հրապարակելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**9. Գնահատող հանձնաժողովը որոշեց.**

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, գ. Ծովինար, 3-րդ թաղամաս, հրապարակ 33 շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ ____________ Ս. Բալոյան

Անդամներ՝ ____________ Ա. Մանուկյան

____________ Հ. Գալստյան

Քարտուղար՝ ____________ Ժ. Խաչատրյան